ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

8 մայիսի 2015 թվականի **թիվ 15** քաղ. Մոսկվա

Առեւտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագրի կնքման վերաբերյալ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հետ բանակցություններ սկսելու մասին

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց.**

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մասնակցությամբ սկսել բանակցություններ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հետ՝ առեւտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագրի կնքման վերաբերյալ:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդին՝ սահմանված կարգով հաստատել սույն Որոշման 1-ին կետում նշված բանակցությունները վարելու համար հրահանգները:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**